



Армянский Колледж

+7 904 506 91 28

Учитесь АРМЯНСКОМ говорить на ЯЗЫКЕ

Частные уроки армянского языка
тел. 8 904 509 68 76

Օրերի հետ

Հայր միշտ պիտի ապրի ու չմոլորվի

Մայիսի 28-ը հայ ժողովրդի համար նոր կյանքի սկիզբ է համարվում: 1918 թվ.-ի մայիսյան հերոսամարտերից հետո ծնունդ առավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը: 2015 թվ.-ի մայիսի 28-ը նաև վաղ կմնա Աբսալ բաղաձայնի թիվ 4 դպրոցի «Արարատ» հայկական խմբակի սաների հիշողության մեջ որպես վերածննդի և հայի ոգին առնական պահելու օր: Այդ օրը կրկնակի տոն էր նրանց համար. տոնում էին Հայաստանի Առաջին Հանրապետության օրը և նաև ներկայանալու էին մի միջոցառմամբ, որը նվիրված էր Հայոց տառերին: Տոնական տրամադրություն էր տիրում դասասենյակում: Դասասենյակը խնամքով զարդարված էր հայկական եռագույնով ու գերբով, լցված էր մետրայան տառերով:

Դու՛ք մեր սիրասուն Այբբենարան ու Ընթերցարան, եվ դու՛ք էլ հայերեն տառեր մեր սիրուն, Այսօրվանից մերն էք հավետ: Միշտ էլ պիտի քայլենք ձեզ հետ, Ձեզնով գրենք, ձեզնով կարդանք, Մեծ Մաշտոցին մեր պարտքը տանք:

Ծնողների աջակցում երևում են հիացմունքի ու հուզմունքի արցունքներ: Նրանց ևս մեկ անակնկալ էր սպասվում: Մեկ

Հիացմունքս չեմ կարող թաքցնել: Երևի չկա առավել երջանիկ զգացմունք, երբ քաղում ես տնկածը ծառի համեմատ ու հյուսիսի պտուղները: Բոլորը ստացել էին բարձր գնահատականներ: Այս փաստը չվրիպեց հայ համայնքի աչքից: Երեխաները ստացան պատվոգրեր ու փոքրիկ հուշանվերներ: Ծնողներն էլ իրենց մաղթանքները հղեցին երեխաներին և շնորհակալական խոսքեր հայտնեցին ուսուցչուհուն օտար ափերում հայի ոգին վառ



Ու այս ամենը վկայությունն է նրա, որ ցեղասպանություն տեսած ժողովուրդը կարողացավ ինքնակազմակերպվել, ստեղծել պետություն ու վաստակել աշխարհում ապրելու իր իրավունքը: Եվ ուր էլ որ հասնում է հայի գիրքն ու գիրք, կենդանի է դեռ հայության ոգին:

Դարեր են եկել գնացել անդարձ, Ազգեր են ծնվել ու մեռել անհետ: Բայց մենք կանք նորից, կա երկիրը մեր Ու անուշ հնչում է մեր հայոց լեզուն: Մետրայ Մաշտոցը ոգին է հայի Եվ դարձրե՛ք, դարձրե՛ք նման է ջահի, Մեր ճամփան պիտի շողա ու վառվի, Որ հայն ապրի միշտ ու չմոլորվի:

Լուսինե Պետանյան
«Արարատ» խմբակի հայոց լեզվի ուսուցչուհի



օր առաջ երեխաները հանձնել էին տարեվերջյան ստուգաթղթ: Ամեն ինչ շատ լուրջ էր. թելադրություն էին գրել ոչ թե սովորական թղթի վրա, այլ դրոշմած Դոնի Ռոստովի Նոր Նախիջևանի հայկական համայնքի կնիքով:

պահելու համար: Միջոցառումը ավարտվեց խմբակի հիմնով, որը հնչեց սաների իսկ կատարմամբ: Այն ստեղծվել է դեռևս 7 տարի առաջ և կոչվում է «Հայերեն» (խոսք Խաչիկ Դաշտենցի, երաժշտ. Լուսինե Պետանյանի):

Ստեղծագործում են մեր ընթերցողները



Աժդահակ
(Կարոտի փոխարեն)

Ի՞մ Աժդահակ՝ Վեհապսակ, Գագաթ շքեզ շուրջափրի, Արծաթ թագն ես, աշտանակն ես, Գեղամա սեզ սարերի:

Դու ակունքն ես ու աղբյուրն ես, Կրոխտ, անուշ երգերի, Ապացույցն ու լուռ վկան ես, Հավերժ անցած դարերի:

Քո լանջերում միշտ ծաղկազարդ, Յնդում են վիշտ, ցավ ու դարդ, Քեզ փարվում և ամոքվում են Բորոտ, հիվանդ ու տկար:

Մարգերիդ մեջ՝ մշտադալար, Կա և՛ տավիղ, և՛ քնար, Ու երկնապար բյուր հավքերիդ, Դոյակ ես դու և սնար:

Կարոտահույզ զավակներիդ . Անուշ մայր ես, բարի հայր, Ի՞նչ խոսքերով քեզ զովբերեմ, Ես քո խենթն եմ՝ սիրահար...

Մի՛ շտապեք

Հենց նոր միայն հանդիպում ենք, Ինչև՛հայտնում ու ծիծաղում եք, Թեկուզ և դեռ չեք ճանաչում, Երկար-բարակ չեք էլ չափում, Անփույթ դատում և ասում եք՝ Խելառ է սա: Բայց քիչ հետո, փոքր ինչ անց,

Համլետ Միրզակի Նունուշյանը ծնվել է 1959 թ. Գեղարքունիքի մարզի Հացառատ գյուղում: 1981 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետը: Երկար տարիներ աշխատել է որպես մանկավարժ: 1991 թ. սկսել է զբաղվել ձեռնարկատիրությամբ: 1994 թ. ընտանիքով բնակություն է հաստատել Ռուսաստանի Դաշնության Սուրգուտ քաղաքում, իսկ 2007 թ. ընտանիքով բնակվում են Դոնի Ռոստովում: Ունի երկու դուստր և թոռնիկ:

Նորից նայում, զարմանում եք, Կարծելով թե՛ ճանաչում եք, Այս անգամ էլ մեծահոգի Արագ դատում և ասում եք՝ Խելոք է սա: Մի փոքր անց, բայց շատ չանցած, Կրկին նայում, հիանում եք, Ողջ եուրյամբ միանում եք, Համոզված, որ ճանաչում եք, Հապճեպ դատում և ասում եք, Հանձար է սա: Բայց սպասեք, մի շտապեք,

համբերեք, Հետս նստեք, ասեք, խոսեք, Ծանոթացեք, Սիրոս, հոգիս, եությունս լավ իմացեք,

Այնժամ միայն ճիշտ կդատեք, Եվ իրոք որ, ճիշտը կասեք, Չէ, խելառ չէ, ոչ էլ՝ հիմար, Ո՛չ տաղանդ է, ո՛չ էլ՝ հանձար, Մի մանուկ է ինքնամոռաց, Հավատով լի՝ դեպի Աստված, Սիրում, հարգում է աղ ու հաց, Սիրում է շատ տարբեր մարդկանց, Սիրում է կյանք ու աշխատանք, Սիրում է երգ, սիրում է պար, Սիրում է խոսքը՝ չափածո, Եվ անում է այդ ամենը՝ Ի սեր Աստծո՛ւ...

Չինվոր եղեք

Անկեղծ պիտի խոստովանեմ, Ես չգիտեմ, թե ես ո՞վ եմ, Ծամփող եմ, թե տարագիր եմ, Թե դուք գիտեք՝ դուք ասացեք, Համաձայն եմ՝ ինչպես ասեք, Մենակ խնդրեմ, մենակ չասեք, Թե օտար եմ:

Այո՛, իրո՞ք, տարագիր եմ, Արդարացում գո՛ւցե չունեմ, Դառը, տխուր հուշեր ունեմ, Ու չեմ ուզում մեկ-մեկ նշել, Անկեղծ ասած՝ ծանր է հիշել: Տարագիր եմ, ու շատերին՝ բախտակից, Տարաբախտ եմ, շատերին էլ՝ կարեկից,

Անձանոթ եմ, բայց օտար չեմ: Անկեղծ պիտի խոստովանեմ, Ես չգիտեմ, թե ես ո՞վ եմ, Տարագիր եմ, թե զինվոր եմ, Թե դուք գիտեք, դուք ասացեք, Համաձայն եմ՝ ինչպես ասեք, Մենակ խնդրում եմ, մենակ չասեք՝ Դավաճան եմ: Ես զինվոր եմ, կամավոր եմ, Եվ իմ կովի դաշտը ունեմ, Ոստի դեմ՝ բանակ չունեմ, Միակ գեներա՛լ հայոց լեզուն, Հավատով պիտի, աներերուն: Դուրս եմ եկել անհավասար մենամարտի,

Թանկ է գինը հաղթանակի, Մնալու ենք մենք հայեցի: Անկեղծ պիտի խոստովանեմ, Ես չգիտեմ, թե ես ո՞վ եմ, Չինվոր եմ, թե քարոզիչ եմ, Թե դուք գիտեք, դուք ասացեք, Համաձայն եմ՝ ինչպես ասեք, Ասե՛ք, խնդրեմ, ինչպես կուզեք, Ինչ խոսքերով կուզեք դատեք, Կուզեք՝ օտար ինչ համարեք, Նույնիսկ՝ դավաճան անվանեք, Մենակ խնդրում եմ, խնդրում եմ, Աներևույթ այս ավարայրում Դուք էլ ինչ հետ զինվոր եղեք:

Համլետ Նունուշյան

Զինադադար

Զինադադար է Արցախ աշխարհում, Սուր վառողահեղձ փոշին ամպամած Վխտում է հողի մարմնով ճաք-ճաք՝ Լիզելով արևոտ խոտերը սքաճ...:

Արևահեծերի խոռոչներից սև Նոր ծիլ է հանում դեպ երկինքը ջինջ, Չնհալից փախչող ամվի ձայնը խն Խեղում է անզուսպ կանացի մի ճիչ...:

Դառնալից ցավն է որդեկորույս մոր՝ Սուր մագիլներով ճակոկում սիրտն այն, Սարսուռն էին ձայնից սար ու ձոր Չեր սարսուռ սակայն աշխարհն ունայն...:

Չորի բերանին, թարմ շիրմի մոտ, Ճշում էր մայրը, ճշում՝ դիվահար, Նրա աչքին դեռ զղիրդ էր, որոտ, Կուզում էր որդին օջախի համար:

Մարտնչում էր քաջ, հավատով վստահ, Արցախ աշխարհի գալիքների վառ, Դղիրդ էր, որոտ և իմացալ մահ, Չեր տրվել նրան դեռ Զինադադար:

Այս առավոտ

Շուշի ազատագրման տարեդարձին



Կսկծալից վերքերը, Արյունալից ու ցավոտ, Մի թևաբաց գողորիկ հովիկ, Թող փայփայե այս առավոտ...:

Թող մայրերը որդեկորույս, Շրթունքազող, արցունքոտ, Քեզ նվիրած հոգու լույս Մոմեր վառեն այս առավոտ:

Ու բարձունքիդ կապուտաչ, Թող որոտա ձայնով խրոխտ, Արցախամոր դոնաբաց Չանգակները այս առավոտ:

Հաղթանակի երգը շուրթին՝ Սրիկազերծ, արևոտ, Թող հուրհրա մեր Շուշին, Եռագույնով այս առավոտ...:

Դասընկերոջս

Նվիրում եմ Ալիխան Մուրադյանին՝ Արցախյան պատերազմում երկու որդի կորցրած հորը

Երեկ առավոտ, դպրոցի դիմաց, Կանգնել էինք լուռ... Երկու դասընկեր, Ուր թողել էինք օրերին կառչած, Հեռո՛ւ-հեռո՛ւ մակնությունը մեր:

Ամեն ինչ այնտեղ անդորդ էր ու կույս, Հնչում էր հեռվից ամվի մեղեդին, Պատուտակի պես փարվել էր հոգուս Մարած պահերի քնքշությունը հին:

Մտայլ էր ընկերս, մտայլ էի ես, Դժվար էր կիսել նրա վիշտը խոր, Մայիսն էր, գարուն, ծաղկունքը պես-պես, Օրովում էին մեր շուրջը գլխիկոր:

Օրովում էին նրա շուրջը գլխիկոր, Ամեն մի ճյուղ, խոտերը կանաչ, Չուլան որդեկորույս այն հորը՝ սզվոր, Որ կանգնել էր լուռ... շուրթերին՝ հառաչ:

Մտայլ հայացքը երբ վեր բարձրացրեց, Չսպելով վշտի արցունքները լի, Նա շրթունքազող ինձ այսպես ձայնեց. Հաղթանակ այլ կերպ չի լինի...:

Հայոց լեզուն

Երբ շուրթերիս մեղրածոր Հնչեց հայոց արուբեն, Հորդեց հոգուս հենց այն օր Հայոց լեզվի սերը խոր:

Նրա անտես թևերին Անցա հեռուն աշխարհի, Չուված հոգուս անմարմին, Բյուր դարերի ու պահի:

Ու պապերիս լեզվի Նուրբ, Ամենագոր ակունքին, Խոնարհվեցին ջերմ ու սուրբ Հնչյուններն իմ շուրթին:

Ու դողանցեց իմ հոգուց, Նվիրական մի քնար, Որ պիտ ըրգե որդես աղոթք Հորինողի փառքը հար...:

Թամարա Ավագյան